

ՀԱՅԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ. ԼԵԶՈՒԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ. «ՀԱՑ» ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄԸ

Լուսիտ Անտիստան

Լինելով հնագույն բառերից մեկը՝ «Հաց»-ը չի գտել վերջնական ստուգաբանություն, եւ կարելի է՝ ասել՝ ոչ միայն Հայերէնում: Հայերէն «Հաց» բառի ստուգաբանական փորձերը բազմաթիւ են, այնուամենայնիւ, նրա ծագումնաբանութեան հարցը մնում է առկախ: Այս յօդուածը ծագումնաբանութիւնը պարզելու փորձ է, որ հետաքրքրական կապեր ու առնչութիւններ է բացայայտում ազգաբնական, լեզուաբանական, պատմական, մարդաբանական, կրօնական, մշակութաբանական աշխարհայեացքներում եւ դրանց համադրմամբ՝ նոր լոյսի տակ ներկայացնում Հաց հասկացութիւնը եւ նրան տրուած անունը:

Հիմնաբառեր: Հացի մշակոյթ, հացի պաշտամունք, աշխարհընկալում, ստուգաբանութիւն, ինքնութիւն, ինքնանուանում, հատ-հայս-հայ-հաց:

Հացի մշակոյթ եւ հացի պաշտամունք: Հայաստանում հացի բազմահազարամեայ մշակոյթի եւ նրա պաշտամունքի մասին վկայում են կենցաղն ու սովորոյթները, ծէսերն ու ականդոյթները, օրհնանքները, անէծքները, որոնք շատ խոր ակունքներ ունեն: Որպէս բառի առաջին ամենապարզ ընկալում՝ «Հաց»-ը առ հասարակ սնունդ է նշանակում, հոմանիշ է ուտելիք, կերակուր բառերին եւ բազմաթիւ դարձուածքներով է երեւում կենցաղում՝ «հացդ կեր», «հաց պատրաստիր», «հացը գցէք», «սա

հաց ու պանիր ուտել չէ» եւ այլն: Նշանակում է նաեւ փորձառութիւն, ապրուստի միջոց, հիւրասիրութիւն², կարգավիճակ, զոհաբերութիւն, եւ այդ մասին խօսում են ուրիշ դարձուածքներ՝ «էնքան պիտի հաց ու պանիր ուտես...» (աճել, փորձ ձեռք բերել), «հացով մարդ» (հեւրասէր), «հաց կտրել» (հիւրասիրուել), «հացով տեղ» (եկամտաբեր պաշտօն), «հացի տէր անել» (ապրուստով ապահովել), «հացից ընկնել» (ապրուստից զրկուել), «հացին իւղ քսել» (չողոքորթել)³, «ո՞ւմ էի մի կտոր հաց տուել» (զոհ մատուցել) եւ այլն:

Հացի աւելի բարձր գիտակցական ընկալումը կայ նաեւ, որ կրում է առաջին հացը պատրաստողի՝ մշակութային նախնու մատնահետքը եւ խոնարհումը նրա առջեւ. հացը սրբացել է, եւ կենցաղում նրա նկատմամբ երկիւղածութեան դրսեւորումներ են՝ հացի փշուրն իսկ գետնին չնետելը, նրանով երդուելը՝ «էս հացը վկայ», նրա ներկայութեամբ եւ նրա պատրաստման ընթացքում ոչ մի վատ խօսք չասելը ու յոռի մտքեր չածելը, նրա ճամարիտ դատին ապաւինելը, ասես հացն ի վերուստ կարգուած է որպէս արդար ու անկաշառ դատաւոր, վերին արդարութեան

1 Հեղինակի համաձայնութեամբ՝ յօդուածը կը հրատարակենք՝ անոր որդեգրած մշտնջենական ուղղագրութեանէն որոշ սկզբունքներ գործնական մատակարար գեղչելով: (Խմբագրութիւն)

2 Չամտեսելով լեզուական որեւէ իրողութիւն, հիմնուելով հնչիւնաբանական օրինաչափութիւնների, հնագույն գրատր վկայութիւնների եւ ստուգաբանութեան վրայ՝ ուզում ենք յիշեցնել, որ [յու] հնչիւնի համար հին ձեռագրերում օգտագործուել են «ի» եւ «ե» ձեւերը մի շարք բառերում՝ աղբեր, ալեր, եղբեր, գեղ, հարեր, բեր, հեր, երկեղ, թեր, եղ, առեւծ եւ այլն:

3 Սուրիասեան 1975, 352-354:

աչք ու չափանիշ՝ «Թէ՛ սուտ եմ ասում, էս հացը բռնի իմ աչքի լուս», անարժան ու իր վրայ թափած երախտիքը չվայելողին նոյն ձեւով անհիծելը՝ «Իմ ձեռքի հաց բռնէ քու էրկու լուս»⁴:

Հէնց միայն այն, որ գուժանը աշխատանքային երգերում աշխարհի հիմք է համարուում, ինքնին հացի պաշտամունքի դրսեւորում է: Որ թոնիրը սուրբ վայր էր, խօսում է հացի պաշտամունքի մասին: Շնորհալու հանելուկներում ցորենը մարդկային կերպարանք է առնում եւ իր իսկ գաղտնագրուած կենսագրութեամբ պատմում է մարդկային կեանքի, փորձութիւնների, տառապանքի, կատարելագործման, ինքնագոհաբերման պատմութիւնը: Դ. Վարուժանը ազգային ակունքներից բերած պարզ խորհուրդներով ու անյիշելի ժամանակների նշաններով զարդագրում է սրբազան հացը «Հացին երգը» ժողովածուում: Եւ հացի խորհուրդով ու նշանով համօրէն առլի է հայ գրականութիւնը:

Գիտակցական սանդղակի վերին աստիճանին ի վերջոյ հոգեւոր հացի գաղափարն է շողում, որ գրականութեան մէջ լաւագոյն դրսեւորումն է գտել Ա. Իսահակեանի գրչով՝ աներեւոյթ կերպով, առանց «հաց» բառի կիրառութեան, բայց հէնց ոգու հացը ակնարկելով. «Ես ձեզ ասում եմ՝ կը գայ ոգու սով, եւ դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ»:

4 Հնագոյն ձեռագրերի վկայութեամբ՝ «թէ» եւ «եթէ» շաղկապների նախնական, բնիկ գոյութիւնը «թէ» եւ «եթէ» է: Այս՝ առաջին հայեացքից անսովոր ուղղագրութիւնը բացատրուում է եղանակատրոդ բառերի (ախ, այո), շաղկապների (սպա, նա), ինչպէս նաեւ ձայնաորայնագ յատուկ անունների (Արա, Եղիա, Աննա), դերանունների (սա, դա, նա, սորա, նորա) եւ բայի բուն հրամայական ձեւերում (կարդա, համարեա) «եզրափակիչ» յ-ն չգրառելու կանոնով: Այդպէս եւ գրուում նաեւ թե-ով կազմուած բառերը՝ միթե, գիթե: Տես Լ. Աւետիսեան, Երբ յայտածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը, Երեւան, 2018, էջ 18-25:

5 Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն 1972, հատոր Գ, 131:

Ազգային արժեհամակարգ. հացի պատրաստումը որպէս միատերիա: Հացը հազարամեակներով մշակուած ազգային արժեհամակարգ է նաեւ, որ հացի պատրաստման սրբազան արարողութեան հետ է ներարկուում մարդու մէջ: Դա հէնց հացի եւ ինքնութեան նոյնականացումն է: Եւ սա ոչ միայն վերացական նոյնացում է, այլեւ նիւթեղէն, շօշափելի, մտապատկերների խտացմամբ մի համընկնում, համեմատուող պատկերների՝ միմեանց լիովին ծածկում: Արցախցին փոքրամարմին մարդու մասին ասում է՝ «պո՛ւլը կուճի» (խմորագունդը՝ բուլը փոքր), եւ հակառակը՝ «պո՛ւլը մեծ»: Այսպէս մտքի պատկերներում եւ աշխարհի պատկերաւոր ընկալման մէջ նոյնանում, ասես նոյն գնդից են բացուում հացն ու մարդը: Սա հայի ստեղծած, բայց չգրառած բանահիւսական արժեքաւոր մի երկ է, աշխարհաստեղծման առասպել՝ փոխանցուող մեկ բառով՝ «պո՛ւլ», հանդիսաւորապէս ու ծիսաբար ցուցադրուող պատասխան այն հարցին, թէ ինչպէս է արարուել մարդը:

Նոյն արցախցին, օրինակ, երբ տեսնում է, որ ինչ-որ մեկը չափն անցնում է ու թոյլ է տալիս նոյնիսկ աննշան անյարգալից վերաբերմունք, ասում է. «Տու արթէն պո՛ւլերը կոխ ըս տամ»՝ դու արդէն բուլերը (խմորագնդերը) ոտնատակ ես անում, այսինքն՝ սրբութիւնների վրայով ես անցնում, արժեհամակարգ ես պղծում: Իսկ ամենադիպուկ ու ամենաբազմախօս արտայայտութիւնը, որ լսել եմ երբեւէ, այլազգի (ուսու) աղջկայ հետ որդու ամուսնութեան դառն իրականութիւնը մեծագոյն վշտով ընդունած մօր եւ ի դէմս նրա՝ բոլոր նախնիների ծաղրողը հանդիսաւորող ամենահոծ ու սեղմ թատրերգութիւնն է երբք բառով, որ պատմել չի լինի, դրա դառնութիւնը միայն պէտք է խորապէս զգալ. «Հացըս խլէք տէռավ»՝

Հացս յաբ (ռուսերէն՝ Հաց) դարձաւ: Այսինքն՝ Հացս ոչ միայն սկսեցին օտար բառով անուանել (սա առաջին ազգական է), այլեւ իսկապէս փոխեցին-այլասերեցին այն, արդէն իմ իմացած, ինձ ծանօթ, իմ հունցած Հացը չէ, որն իմ Հայելային անդրադարձն էր, իմ մարմինն էր, ես էի: Սա արդէն իմ լեզուի, հետեւաբար՝ նաեւ իմ ինքնութեան այլակերպութիւնն է, աղաւաղումը: Եւ թէեւ «Հաց» բառի փոխարէն իւրաքանչիւր այլ բառի դէպքում եւս այս արտայայտութիւնը կորստեան պատկեր կը ներկայացնէր, ասենք՝ «ճո՞ւրըս վաղատէ՞նալ», «սեղանս ստօլ տէ՞նալ», «կի՞նիս վի՞նօ տէ՞նալ», սակայն ոչ մի ուրիշ արտայայտութիւն չի կարող ասել այն ամենը, ինչ ամփոփում է «Հացըս խլէբ տէ՞նալ» խօսքը: Հացի պատրաստումը խորհրդաւոր մի միտերիս է յիշեցնում, որին կարող են մասնակցել միայն Հաղորդուածները: Խորհրդաւոր այդ արարողութիւնը՝ խորհրդապաշտական եւ այլաբանական տարրերի միահիւսմամբ, ծիսական լեզուով պատմում է մի զոհաբերութեան, սրբազան մի զոհի մասին, որը կեանք է շնորհել բոլոր նրանց, որոնք որպէս նշխար ճաշակել են իր մարմինը եւ նոյնացել իր հետ: Հացը սուրբ ընծայ է, պատարագ: Հացը, որ մարմինն է իմ Աստուծո, նաեւ իմ մարմինն է, ես եմ:

Ինքնութիւն-թոխմոր-հաց: Ժողովրդի գիտակցութեան մէջ ու կենցաղում առկայ ծող մաքուր փոխաբերութիւնները անհերքելի ապացոյցն են նրա, որ Հացը ինքնութեան խորհուրդ է ամփոփում: Այն փոխաբերութիւնը, որ ամեն մարդ իր խմորազնդից է ստեղծուած, մտքի ուղղակի յղումն է դէպի հունցուած ամբողջական այն զանգուածը, որտեղ բոլորի ես-երը միաձոյլ են, միատարր, Համասեռ, պատկանում են միեւնոյն Համապարփակ Ես-ին՝ ինքնութեանը, եւ իրենց մէջ կրում են սրբազան այն մասնիկը, որով կարող են սր-

բագործել գալիք խմորաշաղախներ, ճիշտ այնպէս, ինչպէս իրենց է փոխանցուել առաջին խմորի մասունքը: Չէ՞ որ ամեն անգամուայ «եկած» խմորից մի փոքրիկ գունդ՝ որպէս կենդանի ու կենդանութիւն Հաղորդող մասնիկ, առանձնացնում ու պահում են յաջորդ Հացի Հայսին՝ խառնելու Համար, դրանով իսկ Հազարամեակների հեռաւորութիւնից մեզ Հասած նոյն կենդանի Հացն է արարուում ամեն անգամ, ինչպէս Սուրբ Թաղէոսի՝ Հայաստան բերած իւղն է Հազարամեակների միջով ընդխառնուում միւռուինին: Այդ սրբալոյս կաթիլի նման հէնց թթխմորն է ամբողջ խմորին կենդանութիւն Հաղորդում, նա նիւթը որակապէս փոխող այն նշխարն է, որից մեծ զգուշութեամբ են մասնիկ փոխանցում թթխմոր խնդրողին, եւ՝ ոչ բոլորին, ասում են, թէ նոյնիսկ Հացը կարող է խռովել ոչ բարի լիցքերից: Թերեւս նաեւ հնաւանդ ծէսով ու խորհրդաւոր կերպով վերջին ընթրիքին Քրիստոսի բաժանած Հացն էր հոգեւոր այն թթխմորը, որով պիտի միաձուլուէին մարդ ու Աստուած եւ նոյնանային:

Մեկ այլ բացայայտ ճշմարտութիւն ամրագրեցինք, որ «խմորի գնդերը տրորել», նշանակում է՝ անձը վիրաւորելու սահմանից վաղուց անցած լինել ու Հասնել սերունդների չընդհատող շղթային՝ ինքնութեան ամենազգայուն նեարդաթելին, եւ վիրաւորանքը մինչեւ նախահօրը Հասցնել: Իսկ «Հացը խլէբ դարձնել»-ը ինքնութիւնն ուրացած եւ նրան դաւած լինելու փաստի արձանագրութիւնն է:

Ինքնանուանումից մինչեւ հացի անուանում: Այժմ տեսնենք, թէ ինչ է պատմում «Հաց» բառը:

6 Հայս - ալեքի ու ջրի շաղախ: ՆՀԲ բացատրում է որպէս՝ Արմատ բառիս Հաց, Չանգուած ալեք եւ ջրոյ, չեւ եւս խմորեալ (Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, Վեներտիկ 1837, Քատ. Բ, էջ 32):

Այդ բառը, իմ համոզմամբ, հացի մշակոյթ բերած ազգի խորհրդանշական եւ փոխաբերական մտածողութեան առաջին դրսեւորումներից է, բնագանցութեան, մտահայեցութեան արտայայտութիւն: Բոլորովին պատահական չէր վերելի զրոյցը հացի եւ ինքնութեան նոյնականութեան մասին. այն իսկապէս ունի իր հիմնաւորումները: Եւ չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ՝ ուզում ես ազգի ծագման մասին իմանալ, պարզիր, թէ ինչպէս է անուանել նա հացը:

Նկատելի է հետաքրքիր մի օրինաչափութիւն, որ թերեւս դեռ ուսումնասիրութեան կարիք ունի: Բնականաբար, իւրաքանչիւր վարկած, որ կանխատեսում է նոր երեւոյթ, եւ մասնաւոր դատողութիւններից բխող իւրաքանչիւր նոր եզրայանգում կեանքի իրաւունք են ձեռք բերում, եթէ ուսումնասիրող դէպքը հետաքրքիր ու համոզիչ լինելուց բացի եզակի չէ, եւ առկայ է գոնէ երկրորդ օրինակը: Սակայն տրամաբանութիւնը հակուած է երկրորդ նոյնատիպ դէպքը համարել զուգադիպութիւն այնքան ժամանակ, քանի դեռ չի յայտնուել զուգադիպութեան հերքումը՝ երրորդ օրինակը, որն արդէն ոչ թէ մեկ անգամ, այլ երիցս է հաստատում օրինաչափութիւնը՝ լրացուցիչ հաւաստիք դարձնելով իւրաքանչիւր նոր փաստի յայտնութիւնը:

Օրինաչափօրէն երկրանունների մեծ մասը կազմուել է բնիկների ինքնանուանումից: Եթէ երկիրն արհեստականօրէն չի ստեղծուել, ինչպէս Ադրբեջանը, կամ եթէ այդ տարածքում ապրողները բնիկութեան դրոյթն ըմբռնած ու պատմութիւնն իրենց քմահաճոյքով իմբազրած նուաճողներ չեն, ինչպիսին թուրքերը, ապա բնականօրէն նախ՝ կազմաւորուած ազգի անունն է հաստատուել, յետոյ միայն՝ նրա կռած-կոփած, պաշտպանած ու ամրացրած սահմաններով երկրի, որի անունն ինքնին ար-

ձանագրութիւնն է խօսուել այն փաստի, որ իր անուանատուն իր իսկ կերտողն է: Առասպելները գեղեցիկ կերպով գրեթէ որպէս հաւաստի աղբեր են ներկայացնում տուեալ ազգի ծագումնաբանութիւնը, ինչպէս մեր նախահօր՝ Հայկի անուամբ կոչուած Հայաստանը, որ բնօրրանն է նոյն նախահօր անուամբ կոչուած ազգի՝ հայերիս: Այդպէս եւ հին Միջագետքի կրօններում գերագոյն աստուած Բէլի անունով է ստուգաբանուում Բաբելոն քաղաքի անունը⁷: Նոյնպէս յունական առասպելներն են պատմում առասպելական երկուրեակների՝ Ռոմուլուսի եւ Ռեմուսի մասին, եւ ըստ աւանդութեան՝ Հռոմ քաղաքը հիմնադրել է Ռոմուլուսը:

Իսկ ինչպէ՞ս կրնդունուի մի վարկած, թէ այն ցեղը, որն իրեն տարբերակել է մեւս ցեղերից, ճանաչել է իր ինքնութիւնը, հաստատել է ինքնութիւնը ձեւաւորած աշխարհի սահմանները եւ իր անունով կոչել այն, նոյն այդ ցեղը, ոտք դնելով մշակոյթի առաջին սանդղակին եւ բնութեան մէջ ինքնին գոյութիւն չունեցող անփոխարինելի անունը՝ հացը ստեղծելով, նրա վրայ նոյնպէս իր տոհմական դրոշմակով դաջել է իր ինքնանուանումը եւ այդպէս վաւերացրել իր հեղինակութիւնը: Արդարեւ, գեղեցիկ վարկած է: Սակայն աւելի համոզիչ են փաստերը, որոնք գուցէ եւ լեզուաբանական, հոգեվերլուծաբանական, ազգագրական, հնագիտական, մարդաբանական նոր ուսումնասիրութիւնների առիթ տան եւ վստահեցնեն, որ եթէ ուզում ես իմանալ ազգի ծագման մասին, պէտք է պարզես նաեւ, թէ ինչ է ասում նա հացին:

Հիմնաւորող փաստեր: Յուսանք, որ այս փաստերը ոչ միայն վարկածի գոյութեան իրաւունքը կը պաշտպանեն, այլեւ կը սկզբնաւորեն «հաց» հասկացութեան

7 Բաբելոն անունը վերջնական ստուգաբանութիւն չունի: Ուստի իմ առաջարկածը մի վարկած է:

անուանումների ծագման մասին մի նոր տեսություն:

Խորուաթներ: Թանայիս անտիկ քաղաքից 1853 թուականին յայտնաբերուած եւ այժմ Երմիտաժում պահուող յունարէն արձանագրութեան մէջ (թանայիսեան արձանագրութիւն), որը թուագրուած է մ. թ. 220 թուականով, այլ անունների կողքին յիշատակուած է *Χοροάθος* (Խորո'աթոս կամ Հորո'աթոս) անձնանունը, որն ուսումնասիրողները մեկնաբանում են որպէս խորուաթական հրուաթ ցեղի ինքնանուանում: Ուսումնասիրութիւնների համաձայն՝ «հրուաթ» անունն ունի իրանական ծագում⁸: Խորուաթոսը յիշատակուած է որպէս որդին Սանդարց անունով մեկի, իսկ վերջինս սկիւթ-սարմատական անուն է: Եւ սա ցուցիչ է, որ հին խորուաթները այդ շրջանում՝ մ. թ. 3-րդ դարի սկզբին, սարմատական կամ ալանական ցեղ են եղել եւ սլաւոնացել են յետագայ դարերում:

Ուրեմն, Եւրոպայի հարաւում բնակուող ազգի երկրանունը խորուաթերէն *Hrvatska* է (միջազգային անունը՝ *Croatia*), Բալկանեան թերակղզին բնակեցրած ժողովրդի ինքնանուանումից՝ *Xorvat* (խորուաթներ, *croats*):

Իմ առաջարկած վարկածի համար հետաքրքիր է այն փաստը, որ հացին խորուաթերէն ասում են *krush* (կրուհ): Իսկ ստուգաբանական բառարանները տալիս են նրա ծագումը՝ որպէս նախաբալթասլաւոնական **kraušas*, նախահնդեւրոպական **krows-o-s*, **krews*: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ ազգերի, ցեղային միաւորների անուններ կազմուած են -իթ (*hettite*), -եթ (*ossete*), -ոն (*brydon*, *saxon*) ազգային պատկանելութիւն ցոյց տուող մասնիկներից, եւ հայերէնը հիմնականում դուրս է թողնում այդ մասնիկները, ինչ-

պէս՝ *hettite* - խեթ (խեթեր) կամ հաթ (հաթեր), *ossete* - ոս (ոսեր), *briton* - բրիտ (բրիտներ), *saxon* - սաքս (սաքսեր), ապա կարելի է ենթադրել, որ խորուաթների նախնական ինքնանուանումը եղել է ոչ թէ *Xorvat*, այլ՝ *Xoru*, գրեթէ ինչպէս կոչուում է նրանց ստեղծած հացը՝ *krush*:

Եթէ սա պատահականութիւն է եւ եզակի դէպք է թուում, ուրեմն ներկայացնեմ երկրորդ օրինակը:

Բրիտներ: Բրիտանիայի բնիկների մասին առաջին տեղեկութիւնը հաղորդում է հին յոյն աշխարհագրագէտ, ճանապարհորդ, վաճառական Պիթէաս Մասսալացին (մ. թ. ա. 4-րդ դարի առաջին կէս): Նա մ. թ. ա. 330-320 թթ. նաւարկել է Բրիտանիայի ափերի մօտով: Թէ եւ նրա աշխատութիւնները չեն պահպանուել, սակայն Հռովմէական կայսրութեան շրջանի ուսումնասիրողները յաճախ են յղում նրան: Նա է կղզիներն անուանել *Βρεττανια* (Բրիտանիա), իսկ նրանց բնակիչներին՝ *Πρεττανοι* (պրետաններ): Ենթադրում են, թէ այդ անունը փոխառել են գաղղիացիներից, որոնք հաւանաբար այդպէս են անուանել կղզեբնակներին: Սակայն սա միայն ենթադրութիւն է, քանի որ կայնաեւ վարկած, թէ Բրիտանիա բառն ունի պիկտական ծագում, քանի որ հէնց պիկտերի⁹ ինքնանուանումը *Prydon* է: Առաջին գրաւոր յիշատակութիւնը բրիտների՝ որպէս առանձին ազգի մասին, տալիս է 9-րդ դարի անգլոսաքսոնական ժամանակագրութիւնը, որի համաձայն՝ կղզու առաջին բնակիչները բրիտներն են եղել, որոնք եկել են (տառացիօրէն) *Armenia*-ից, որ հակառակ յստակ եւ տարընթերցման տեղիք չտուող գրառութեան՝ ուսումնասիրողներն առանց այլեւայլութեան ընթերցում են որպէս Փրանսիայի հիւսիս-արեւմուտքում գտնուող Արմորիկա թերակղզու

8 Որպէս սկզբնաղբեր՝ *Gluhak* 1989, volume 37, number 5, 129-138.

9 Պիկտեր - Օոթլանդիայի հնագոյն բնակիչները:

անունը: Ենթադրուածիւնները շատ են, սակայն եթէ Շոթլանդիայի բնիկներն իրենք իրենց «պրիդոն» են անուանում, կարելի է հէնց այստեղ կանգ առնել ու յենուել հէնց այդ փաստի վրայ: Օրինաչափօրէն երկրի անունը կազմուում է բնակիչների ինքնանուանումից, եւ «պրիդոն» - «բրիտան» - «Բրիտանիա» առնչուածիւնն ակնյայտ է:

Եւ վերստին, հետաքրքիր է այն փաստը, որ անգլերէնում հացը հնչում է ինչպէս տեղաբնիկների ինքնանուանումը՝ *bread*: Ի՞նչ ծագում ունի այդ բառը, եւ արդեւք պատահակա՞ն է նրա նմանութիւնը հայերէն «բրդել» բայի արմատին եւ նրանից կազմուած «բրդուծ» բառին:

Ստուգաբանական բառարանները *bread* բառը բացատրում են որպէս սնունդ՝ պատրաստուած յլիւրից կամ որեւէ հացահատիկից, որ հունցում, թողնում են՝ ուռչի, եւ թխում են: Մի տեսութեան համաձայն՝ *bread* նշանակում է «փշուր», «կտոր», «պատառ» եւ համապատասխանում է պրոտոգերմանական **brautham* բառին, որ նախահնդեւրոպական **bhreu* (ուռչել, եռալ, փքուել) արմատից է: OED-ն (*Oxford English Dictionary*) պնդում է, որ հիմնական իմաստը ոչ թէ եփած սնունդն է, այլ այդ սննդի մի կտորը, եւ հին անգլերէն բառը ծագում է պրոտոգերմանական **brautsmon* (բեկորներ, փշուրներ, պատառներ) բառից: Հին անգլերէնում *breotan* նշանակում է «մասերի բաժանել», «կտրատել», եւ առնչուածիւնն ունի *break* (կտրել) բառի արմատի հետ: Ի դէպ, խորութեան *kruih* (հաց) բառը նոյնպէս նշանակում է «կտոր»¹⁰: Հայերէնում ունենք «բրդոն» բառը, որ նշանակում է բրդած հաց, հացի մանր պատառներ: Արմատն է «բրդել», որ բնիկ հայերէն բառ է, հնդեւրոպական նախալեզուում *bherdh* «կտրել» արմատի *bhordh* ձեւից¹¹: Ժա-

ռանգներից է հին բարձր գերմաներէն *baria* «կացին» բառը: Հայերէնում կայ նոյն արմատից կազմուած մեկ այլ բառ՝ «բրդուծ», որ հացի կտոր է նշանակում, ճիշտ ինչպէս *kruih*-ը խորութեան *bread*-ը բրիտների լեզուում: Իսկ փոխաբերէն *bekos* «հաց» բառը իր իմաստով եւ «բեկ» (կտոր) բնիկ հայերէն արմատին իր նմանութեամբ, նաեւ իմաստային այն դաշտով, որով միաւորուում են հաց նշանակող, բայց մասնատուած, մանրացած իմաստ պարունակող վերելի օրինակները, գալիս է լրացնելու հաց - փշուր, պատառ, կտոր շարքը:

Թէ բերած իմ երկրորդ օրինակը միայն զուգադիպութիւն է ընկալուում, ապա նախքան երրորդ օրինակին անցնելը, որը կը յայտնաբերի օրինաչափութիւնը, միջանկեալ մի քանի վարկածային տարբերակներ եւս նկատի ունենանք:

Սլաւոններ: Որտեղի՞ց է ծագում «սլաւոն» բառը: Արեւելեան հռոմէացի գիտնական Պրոկոպիոսի (500-560) համաձայն՝ հին սլաւոնների նախնական անուանումը եղել է Սպորի (*Σπόροι*), որոնք յետագայում երկու ճեղքի են բաժանուել՝ անտեր եւ սլաւներ: Իսկ Սպորի անունը ծագեցնում է յունարէն *σπείρω* («ես ցորեն եմ ցանում») բառից, որովհետեւ, ըստ Պրոկոպիոսի, «նրանք բնակեցրին երկիրը ցրուած բնակավայրերով»: Սլաւոն անունն առաջինը ստացել է հին սլաւոնների հարաւային խումբը: Այդ ցեղանունը (էթնոնիմ) Պրոկոպիոսը վկայում է յունարէն՝ որպէս *Σκλάβοι* (*Skláboi*), *Σκλαβηνοί* (*Sklabēnoi*), *Σκλαυηνοί* (*Sklauēnoi*), *Σθλαβηνοί* (*Sthlabēnoi*) կամ *Σκλαβῖνοι* (*Sklabīnoi*) իսկ նրա ժամանակակից գոթական ծագման արեւելեան հռոմէացի Ջորդանէսը իր «Գեթիկա»-ում՝ լատիներէն: Հին յունարէնում չկան *Σλ-* (սլ) արմատով բառեր, փոխարէնը *Σκλ-* ով սկսուող բառ կայ, ինչպէս *σκληρωσις*

10 <https://www.etymonline.com/word/bread>

11 Աճառտաւմ 1926, Բառար. Ա, 492:

(սկլերոզ), այդ պատճառով բնօրինակը ձեւափոխուել է սկլ-ի:

Ռուսերէն *хлеб* բառը՝ սլաւոնական տարբեր լեզուների իր նոյնանիշներով, ունի ծագման մի քանի վարկածներ, մեկի համաձայն՝ ծագում է նախասլաւոնական ձեւից՝ **xlěbo*, որը, հնարաւոր է, գերմանական նախալեզուից է անցել (**xlaiþaz*), կամ վաղգերմանական ինչ-որ խօսուածքից, որ ամենայն հաւանականութեամբ՝ գոթական լեզուն է: Մեկ այլ վարկածի համաձայն՝ այդ բառը կարող էր բնիկ լինել ինչպէս գերմանների, այնպէս էլ սլաւոնների լեզուների համար: Գերմանացի գիտնականները սլաւոնական *хлеб*-ը առնչում են գոթական *hlaiþs* բառին, հին գերմանական *hleib-*ին: Սլաւոնական լեզուներում *-f-* շրթնատամնային հնչիւնի բացակայութեան պատճառով տուել է *-b*¹²: Արեւելեան գոթերը ներխուժել եւ բաժանել էին սլաւոններին արեւելեան ու արեւմտեան մասերի, եւ նրանց՝ շուրջ 150-ամեայ ներկայութիւնը մեծ ազդեցութիւն է գործել յատկապէս արեւելեան սլաւոնների լեզուի վրայ¹³:

Կարող ենք թոյլ տալ հաւանականութիւն, որ «սլաւոն» բառի «սլաւ»-ն ու գոթական «*hlaiþs*»-ը միեւնոյն արմատը լինեն, այսինքն՝ իմ առաջարկած վարկածի համաձայն՝ ինքնութիւնն (*слав*) ու հացը (*хлав*) միեւնոյն ծագումն ունենան: Հարցումը թողնում եմ առկաի:

Եթովպացիները եւ արաբական հացը: Եթովպիա անուանումը ծագում է յունարէն *Αιθιοπία* [եթիոպիա] բառից, որ նշանակում է արեւակէզ մարդկանց երկիր՝ այդ երկրի բնակիչների մաշկի թուխ գոյնի համար: Նրանց «հաբէշ» ինքնանուանումը Եւրոպա հասաւ արաբների միջոցով: Երբ միջնադարում արաբները նուաճեցին Եգիպտոսը, տեղում բնակուող հաբաշ ժո-

ղովրդի ինքնանուանումից Եթովպիային Հաբէշտան անունը տուեցին, որ յունական հնչիւնատառադարձմամբ Աբիսինիա էր: Սակայն 1945 թ-ին վերականգնուեց երկրի նախկին անունը՝ Եթովպիա: Հայերէնում եթովպացիներին ռամկօրէն «հաբէշ» են ասում, որի գրական տարբերակն է «խափշիկ»: Աճառեանի արմատական բառարանը «խափշիկ» բառը համարում է փոխառութիւն պահլաւերէնից՝ **xabašik*, որը հոմանիշն է արաբապարսկական *habaši* բառի: Պահլաւական ծագման ապացոյց է իկ վերջաւորութիւնը՝ հնդիկ, խուժիկ, պարսիկ: Հայերէնում միջին ա-ն ընկնելով՝ բառը դարձաւ նախ՝ խաբշիկ, ապա՝ Բ հնչիւնը յաջորդող շ-ի կողքին վերածուեց փ-ի¹⁴:

Հաբէշ բառի ստուգաբանութեան մասին արեւմտեան ամենատարածուած տեսակէտի, թէ այն արաբական ծագում ունի, եւ պատմական փաստերի, նաեւ իրենց իսկ՝ խափշիկների կողմից այդ բառի գործածութեան միջեւ հակասութիւններ կան: Հանրագիտարանը հաւաստիացնում է, որ «հաբաշ» անուան հնագոյն յղումը Եգիպտոսի Խատշեպսոտ թագուհունն է՝ մ. թ. ա. 1450 թուականին, նա այդպէս անուանել է խուսկ արտադրող երկրների բնակիչներին: Այս ուսումնասիրութեան շրջանակներից դուրս կարելի էր համարել այդ բառի ծագումնաբանութիւնը պարզելը, եթէ չհետաքրքրէր մի փաստ, որ հացը արաբերէն հնչում է [խաբազ, խբբբզ, խուբբզ]՝ այնքան մաւտ «հաբաշ / խաբաշ, խաբէշ» բառին: Մինչ կը պարզուի բառի ստուգաբանութիւնը, զուտ տրամաբանութիւնից բխող ենթադրութիւններ կարելի է կատարել: Մշակութեան չենթարկուող արաբական անապատներում ոչ նստակեաց կեանքով ապրող արաբները, որ իրենց այդպիսի կեանքի եւ նուաճողական արշաւանքների «չնորհիւ» դարձան նաեւ

12 Pronk-Tiethoff 2013, 83-84.

13 Буровский 2013, 23.

14 Աճառեան 1928, հատոր Բ, էջ 354:

քաղաքակրթութիւնների միջնորդներ՝ Եւրոպային պարզեցնելով իրենց անուամբ ճանաչում գտած Հնդկական թուերը, ինչպէս նաեւ ճատրակը եւ այլ քաղաքակրթական նուաճումներ՝ ակամայ դառնալով դրանց հեղինակը, հաւանաբար չէին կարող ունենալ հացի մշակոյթ, հետեւաբար՝ նաեւ հացն անուանող բառ: Ուրեմն, ինչպէս առաջինը, այնպէս էլ երկրորդը պէտք է փոխառէին իրենց ճանապարհին: Եւ իրենք չլինելով հացի ստեղծողը, կա՛մ այն չէին կարող նոյնացնել իրենց ցեղային ինքնութեան հետ, որպէսզի տային իրենց ինքնանուանումը, կա՛մ անունը վերցրել էին հէնց այն ձեւով, որն արդէն ստեղծողի ինքնութեան դրոշմն էր կրում՝ խաբաշ - խաբազ: Վերստին ընդգծեմ, որ սրանք միայն ենթադրութիւններ են:

Աբխազներ: Աբխազ, Աբխազիա տարբերակով վրացերէնի (*Anxazemu*) միջնորդաւորութեամբ անցել է ռուսերէնին, նրանից էլ մեւս լեզուներին: Արդեւք ունի՞ առընչութիւն նրանց ինքնանուանումը նրանց հացի անուան հետ, որ է *axvaža*¹⁵: Եւ արդեւք պատահականութիւն է այսպիսի նմանութիւնը, եթէ չասենք նոյնութիւնը՝ **avxaža* > *axvaža*:

Բասկեր: Եթէ ինքնութեան հետ հացի անուան առընչութիւնը իսկապէս կայ, ապա ինչպէ՞ս բացատրել բասկերի լեզուում «սնուցանել» իմաստը կրող *haz* բառի գոյութիւնը, որին Կանինին հաւասար է դնում հայերէն «հաց»-ը¹⁶:

Խեթեր: Խեթերէնում հացը՝ *haz(z)ita*-ն, ծիսական հաց է եւ կիրառուում էր հիմնականում անդրաշխարհի աստուածութիւններին զոհ մատուցելիս:

Դեռեւս 19-րդ դարի 90-ական թուականներին արեւելագէտ Պետեր Ենսէնը առաջին անգամ յայտնեց այն կարծիքը,

թէ խեթերը նոյն հայերն են, որ հայերի «հայ» ցեղանուանը համապատասխանում է խեթերի ինքնանուանումը (*ht, hattī. Hate, hati*), քանի որ հայերէնի Հնչիւնային օրէնքների համաձայն՝ *t > j* անցումը «խաթ»-ից տալիս է «հայ» ձեւը:

Գտնելով, որ *Het=Hat* եւ *Hay* ցեղանունների մէջ իրօք *at*-ը հայերէնում օրինաչափօրէն տալիս է *-ay* զուգակցութիւնը (Հմմտ.՝ *pater, phatir, hayr*- հայր եւ *mater, mathir, mayr* - մայր), Պ. Ենսէնը նոյն իսկ խեթերին վերջին հաշուով համարում է հայեր¹⁷:

Կամրջակ մշուշում: Եթէ նոյնիսկ այդպէս է, եւ որոշ լեզուներում նկատելի է հաց հասկացութեան եւ ցեղանուան ընդհանրութիւնը, ամեն դէպքում առողջ բանականութիւնը հարցնում է, թէ որն է տրամաբանութիւնը, ինչը կարող էր առիթ լինել ինքնանուանումը հացին փոխանցելու համար: Կարելի է զուտ տեսականօրէն ենթադրել, թէ նախնական պատկերացմամբ՝ ազգի, ցեղի ինքնանուանումը պարզապէս մարդ է նշանակել, «աղամ»-ի նման: Ինչպէս բնութեան մէջ մարդը կենդանիների տեսակներն էր առանձնացնում եւ անուանում, այդպէս էլ ինքն իրեն է տարբերակել ու անունանել իր տեսակը բնութեան մէջ: Եւ այն միին, սարսափելի, Հնագոյն խորհրդապաշտութեամբ բարուրուած ժամանակներում, երբ կենցաղում ու կրօնահամայական ծէսերում նախամարդն իր նմանի մարմինն էր ճաշակում՝ հաւատալով, թէ ստանում է նրա ոյժը, այդ ժամանակ մի բրիտի նախնին թերեւս իր ցեղակից մեկ այլ զոհաբերուած *brit* (*bread*) է կերել, հրուաթի նախնին՝ իր ցեղակից մեկ այլ *hruat* (*kruh*), նախասլաւոնը՝ ազգակից մի *slav* (գոթ.՝ *hlaifs*, բուլղ.՝ *хляб*, լեհ.՝ *chleb*, ռուս.՝ *хлеб*), արխազի նախնին՝ իր տոհմակից մի *abxaz* (*axvaza*),

15 Աճառեան 1930, Բատոր Գ, էջ 65:

16 Նոյն տեղում՝ 64:

17 Ենսէն 2012, 23:

նախահատիճ՝ մեկ ուրիշ *hat* (*hat*, *haz(z)ita*) եւ այլն: Յաջորդ մակարդակում, երբ մարդկային զոհաբերութիւնը փոխարինուեց կենդանականով, սրբազան կենդանին դարձաւ մարդու փոխաբերութիւնը, նոյնիսկ համարուեց նրա նախնին ու հովանաւորը՝ տոտեմը, ինչպէս հայերի համար խոյը: Ապա բուսական զոհաբերութեամբ ու ծէսերով նոյն մարդկային մարմինը խորհրդանշորէն անփոփոխ սրբազան բոյսի մարմնում: Եւ այս իմաստով է, որ ասում եմ՝ հացը հացի մշակույթ բերած ազգի խորհրդանշական եւ փոխաբերական մտածողութեան առաջին դրսեւորումներից է, բնագանցութեան, մտահայեցութեան արտայայտութիւն: Հէնց այդ փոխաբերական մտածողութեամբ՝ բրիտ ուտող բրիտը շարունակեց ուտել *bread*, արբազ ուտող արբազը՝ *axavaza*, հրուաթի մարմնից իր ուժը ստացող հրուաթը՝ *krut* եւ այլն: Մի խօսքով՝ փոխուեց ամենակարեւոր սնունդը, բայց շարունակեց կրել առաջին անունը: Եւ եթէ բնագիտորէն անհնար է պատկերացնել ժամանակային հսկայական կտրուածութեամբ դարաշրջանների առընչութիւնը, այնու ամենայնիւ ժամանակների մշուշում մեր տեսողութեան համար նշմարող մարդաբանական առանձին խմբեր բնագանցորէն կարող էին կրել վաղնջագոյն ժամանակների մասին ինչ-որ գենետիկ յիշողութիւն՝ պահպանուած լեզուական մակարդակում՝ իրենց համար իսկ անբացատրելի ու անորոշ:

Հայերէն «հաց» բառը: Զահուկեանը խեթերենի *haz(z)ita* բառը համեմատում է հայերէն «հաց» բառի հետ, սակայն կասկածելի է համարում հայերէն բառի փոխառեալ լինելը եւ հարցականով այն ներկայացնում է բնիկ հայերէն բառերի ցանկում¹⁸: Աճառեանը, արմատական բառարանում բերելով ստուգաբանական բոլոր փորձերը, բառը չի ստուգաբանել:

Հր. Մարտիրոսեանը ընդունում է խեթերէն բառի եւ հայերէն «հաստեայ»¹⁹ (չրի եւ ալեւրի զանգուած) բառի կապը: Սակայն «հաց» բառի ամենահաւանական աղբեր է համարում հնդեւրոպական **peh2s-* արմատը, եւ եթէ լատիներէն **pastand* եւ հայերէն «հաց» բառերը չեն բխում հնդեւրոպական արմատից, որ նշանակում է արածեցնել, սնուցանել, կարող են յղել միջերկրածովեան **past-* բառին, որ հացի կամ թխուածքի մի տեսակ է: Եւ անկախ **past-s* արմատի ծագումից՝ հայերէն «հաց»-ը կարող է արտացոլել այդ բառի ուղղականը²⁰:

Ն. Աղբալեանի տեսութիւնը: Կարծում եմ, որ ամենահետաքրքիր մտեցումն է ցուցաբերում Ն. Աղբալեանը եւ իր տեսութեամբ տալիս շատ հարցերի պատասխաններ: Եւ իմ եզրայանգումները լաւագոյն հիմնաւորում են գտնում նրա տեսութեան յենակէտերում: Աղբալեանը հնչիւնների առաջացման ժամանակագրութիւն է փորձում ճշգրտել եւ համոզուած է, որ մի շարք հնչիւններ նախապէս չեն եղել լեզուում, այլ առաջացել են երկու ուրիշ հնչիւններից, որոնք բառի մէջ իրենց անջատակցող ձայնաւորի՝ շեշտից կախուած սղման հետեւանքով յայտնուել են կողք կողքի եւ արագ արտաբերման պատճառով միաձուլուել են՝ ստեղծելով բարդ հնչիւն, որը նոր սերնդի հնչիւն է: Նա նաեւ փորձառական ձայնաբանութեան արձանագրած արդիւնքներն է վկայակոչում՝ հաստատելով, որ զգայուն ձայնագիր մեքենաների գրանցած հնչիւնների վերլուծութիւնը եւ ընթացքի դանդաղեցումը հաւաստում են, որ «ց»-ն բաղադրուած՝ ձուլ հնչիւն է²¹: Արդարեւ, Աղբալեանը նախ յի-

18 Ջահուկեան 1987, 210, 318:

19 Հաստեայք - ՆՀԲ-ը ներկայացնում է որպէս՝ Նոյն ընդ Հայս. Զանգուած ալեր եւ ջրոյ: Արարաք հաստեայս եւ կարկանդակս. Երեմ. ԽԳ, Ժթ:

20 Martirosyan 2010, 396-398.

21 Աղբալեան, 1937, 7:

չեցնում է, որ «արցունք» եւ «պացխուն» ուսմկորէն բառերի շուրջ Յ. Կարստը եւ Հր. Աճառեանը ընդունել են այն իրողութիւնը, որ այդ բառերում «ց»-ն առաջացել է «տ» եւ «ս» հնչիւնների ձուլման հետեւանքով՝ արտասուք > արտսուք > արցունք, պատասխանի > պատսխանի > պացխուն²²: Ապա հետեւում է նրա ճիշտ եւ ուղղորդող հարցադրումը. «Եթէ չլինէին պատասխանի եւ արտասուք բառերը՝ մենք ո՞ր տեղից կարող էինք իմանալ թէ պացխուն եւ արցունք բառերի ց-ն վաղեմի տաս լիւսնայն վանկի եզերական ձայների ձուլումից է ծագում: Այն հանգամանքը, որ մեր ց ունեցող անհամար բառերի նախաւոր ձեւերը չունինք՝ բաւարար հիմք է պնդելու, որ մեր ց ձայնն ընդհանրապէս հին ձուլումի արդիւնք է: Անկասկած ո՛չ: Մեր լեզուի բառերից մեկը՝ կիլիկեանը, ձուլած է տս խումբը եւ տուած է ց: Ոչ մեկ հիմք կայ կարծելու, որ ձուլման այդ ունակութիւնը չեն ունեցած եւ մեր միւս բարբառները: Մենք իրաւունք ունինք ենթադրելու, որ բովանդակ հայոց լեզուն ունեցած է այդ ունակութիւնը, եւ եթէ դասական լեզուն մեզ չի տալիս պացխուն եւ արցունք՝ դրա պատճառն այն է, որ նա պահած է տաս վանկի ձայնաւորը. եթէ չբացնէր այդ ձայնաւորը՝ նա՛ նոյնպէս կը ձուլէր տ եւ ս եզերական ձայները եւ կը տար ց, որովհետեւ ինչպէս տեսանք՝ ց-ն առաջ է գալիս ա՛յն ժամանակ, երբ տ եւ ս ձայներն անընդմիջաբար դառնում են կից եւ ձուլուում են իրար: Մենք տեսանք, որ ձայնագիրը հաստատում է թէ բոլոր ց-երը բաղադիր ձայներ են, հետեւապէս տ եւ ս ձայներ ձուլելու ունակութիւնը մարդկային լեզուին յատուկ է, ուրեմն ենթադրելի է նաեւ մե՛ր լեզուի համար:

«Այս հանգամանքն անուղղակի ապացոյց է՞, որ մեր լեզուի բոլոր տս զուգարդութիւնները գրական շրջանից

չա՛տ դարեր առաջ արդէն ձուլուած ու դարձած էին ց»²³:

Այն կարծիքը, որ հնչական իր համեմատութիւնների վրայ հիմնուելով յայտնում էր Ա. Մէյէն հայերէնի «ց» եւ «չ» հնչիւնների մասին, հաստատում է ձայնագիր մեքենան առհասարակ մարդկային լեզուի «ց» եւ «չ» հնչիւնների համար: Այսպէս, Աղբալեանը ամրագրում է արձանագրած արդիւնքները, որ՝

ա. ց-ն նախնական հնչիւն է, այլ պատմական հոլովոյթի արգասիք,

բ. ց-ն «տ» եւ «ս» ձայների ձուլման արդիւնք է,

գ. ուրեմն՝ տ-ն եւ ս-ն աւելի հին հնչիւններ են, քան ց-ն,

դ. եղել է ժամանակ, երբ չկար ց-ն:

Եւ եզրակացնում է, որ ց-ի տարրալուծմամբ հնարաւոր է գտնել ց-աւոր բառերի նախնական պատկերը, եւ որ աւելի կարեւոր արդիւնք է, «մեր աշխատանքի մեթոտը կիրարկելի է եւ այլուր: Մեր պացխուն եւ արցունք բառերի ց-երի ծագման պարագաները, ց-ի բաղադիր տարրերի բնոյթը, որ պարզում են այդ օրինակները, եւ փորձնական ձայնաբանութեան տուած արդիւնքը, որ զուգահեռ է պատմական իրողութեան՝ մեզ իրաւունք են տալիս հետազօտութեան այս նոր եղանակը կիրարկելու: Վերացական դատողութիւնը, պատմական իրականութիւնը եւ մեքենական փորձը իրար ստուգում են եւ հաստատում»²⁴:

Ապա նա իր վարկածը փորձարկում է հէնց «հաց» բառի վրայ՝ ենթադրելով, որ մի ժամանակ այն ունեցել է *հա՛տիս կամ *հա՛տուս ձեւը, եւ յարաչեշտ երկվանկ բառի անչեշտ ձայնաւորի սղմամբ մօտեցել են տ-ն եւ ս-ն: Մեկ այլ հանգամանք է

23 Աղբալեան 1937, 9-10:
24 Աղբալեան 1937, 11:

22 Աճառեան 1931, հատոր Դ, 36:

բառերի վերջին վանկերի՝ թոյլ եւ փոփոխութիւնների ենթակայ լինելը: Բերելով սանսկրիտում *s* վերջնահնչիւնի՝ *h*-ին մօտ ձայնի վերածման փաստը, որն էլ դիւրութեամբ կարող էր ցնդել, ենթադրում է, որ նոյն ճանապարհով մեր հին *Հա՛տիս բառը պիտի դառնար «Հա՛տի», որ մեր «Հատ» բառի սեռականն է, որն էլ ժամանակի ընթացքում կորցրել է *h*-ն եւ դարձել «Հատ», ինչպէս մեր «պատասխանի» բառը: Ուղղականն ու սեռականը տարբերում էին միայն շեշտով, «Հա՛տի»-ն ուղղականն էր, «Հատի՛»-ն՝ սեռականը: Նախագրական լեզուի մէջ եզակի ուղղականի եւ սեռականի՝ ձեւով նոյնը լինելու մասին Աղբալեանը խօսել է նաեւ 1928 թուականին «Հայրենիք» ամսագրում՝ բառերի քննութեամբ յանգելով այն եզրակացութեան, որ «բոլոր անունների նախաւոր ձեւը նրանց սեռականն է»²⁵: Այսպէս, մեր «Հա՛տիս» բառն անցել է *Հա՛տիս > *Հա՛տիհ > Հա՛տի > Հա՛տ կերպարանափոխութիւնը: Աղբալեանն այս կերպ ցոյց է տալիս, թէ ինչպէս վերականգնած *Հա՛տիս բառը Հայերէնի տարբեր բարբառներում տուել է երկու տարբեր բառեր՝ «Հաց» եւ «Հատ»: Ապա ցեղերի խառնուրդով նոյն ծագումն ունեցող այդ երկու տարբերացած բառերը մտել են Հայերէնի գանձարան իրենց տարբեր պաշտօններով: «Կարելի է ասել, որ առաջին անգամ Հաց պատրաստեց ա՛յն Հայ ցեղը, որ վաղեմի Հա՛տիս բառն ամփոփեց իբր Հաց, որ եւ դարձաւ մեր կերած Հացի անունը»²⁶:

Ն. Աղբալեանի առաջարկած ուշագրաւ տեսութեանն ապաւինելով՝ նոյն նախաձեւից առաջացած երկու բառերին՝ «Հատ» եւ «Հաց», աւելացնում եմ «Հայս» («Հաստեայք», ալեւրի եւ ջրի խառնուրդ, շաղախ) եւ «Հայ» բառերը, որոնք, շատ հաւանական է, *Հա՛տիս-ից «Հաց» տանող

ճանապարհին են ծնուել: Հիմնուելով հնչական այն օրինաչափութեան վրայ, որով ժամանակի հոլովոյթում բառարմատների նախնաձեւութեան *t*-ն տալիս է *y*, կարելի է ստանալ հետեւեալ պատկերը՝

ա. Հայս՝ շեշտազուրկ վանկի ձայնաւորի կորուստով՝ *Հա՛տիս > *Հա՛յիս > Հա՛յս

բ. Հայ՝ շեշտազուրկ թոյլ վանկի չքացում՝ *Հա՛տիս > *Հայիս > Հա՛յի > Հա՛յ

Այսինքն՝ «Հատ», «Հաց», «Հայ», «Հայս» բառերը նոյն ծագումն ունեն:

Թէեւ Հր. Մարտիրոսեանը նոյնպէս «Հաստեայ» բառի ծագումն անորոշ է համարում, ինչպէս Աճառեանն ու Զահուկեանը, սակայն ընդունում է Հաթերէնից փոխառած լինելու հաւանականութիւն, որն ունի *haz(z)ita-* (մի տեսակ թխուածք) բառը:

Եւ ի՞նչ ենք արձանագրում: Այն, որ կան բաւարար հիմքեր՝ ենթադրելու, որ Հայերէն «Հաց» բառը նոյնպէս ինքնանուանում է, այն այդպէ՛ս կոչած ազգի ինքնանուանումը, որը ժամանակի հոլովոյթում *Հա՛տիս բառի ճանապարհորդութեան հանգրուաններից մեկն է եղել, բարբառային մի արտասանութիւնը: Եւ այս յօդուածը սկիզբ է առել հէնց այս ենթադրութիւնից:

Այն մասին, որ մարդկութեանը միշտ հետաքրքրել է, թէ որն է նախալեզուն, կամ որ լեզուն է որից հին, հաւաստում է Հերոդոտոսը՝ իր պատմութեան մէջ ներկայացնելով այդ հարցը պարզելու համար կատարուած թերեւս առաջին գիտափորձը: Մ. թ. ա. 5-րդ դարի պատմիչի վկայութեամբ՝ պարզելու համար՝ եգիպտերէնն է աւելի հին, թէ փոիւզերէնը, Եգիպտոսի Փսամետիկոս թագաւորը հրամայում է երկու նորածնի համար բացառել մարդկային խօսք լսելու ամենափոքր հաւանականութիւնն իսկ: Եւ միայն ամիսներ յետոյ նրանց այցելող մարդիկ երեխաների բերանից լսում

25 Աղբալեան 1928, թիւ 2, 144-153:
 26 Աղբալեան 1937, 14:

են *bekos* բառը, որ փոխաբերվել է նշանակում է «Հաց», եւ թագաւորը եզրակացրեց, որ հնագոյն լեզուն փոխաբերվել է: Հր. Աճառեանը աւելացնում է. «Մենք էլ սրանից պիտի հետեւցնէինք, թէ լեզուն առհասարակ բնածին եւ ժառանգական է մարդու մէջ, եթէ, սակայն, Հերոդոտի պատմութիւնը ճշմարտութիւն լինէր»²⁷:

Եւ եթէ Հերոդոտոսի պատմութիւնը իրօք ստոյգ էր, իսկ Աճառեանի եզրակացութիւնն իսկապէս խիստ տրամաբանական է, ապա ես նոյն այս պատմութիւնն ընկալում եմ որպէս լեզուններում հնագոյն բառի մասին ուղղակի յղում:

Ամփոփում

Ուսումնասիրելով «Հաց» բառի ստուգաբանական փորձերը՝ արձանագրում ենք այն փաստը, որ բառը դեռեւս անստոյգ կամ անորոշ է: Եւ քանի որ լեզուաբանական իրողութիւնների կողքին կարելու են նաեւ սննդի, քաղաքակրթութեան ձեւաւորման մէջ նրա մասնակցութեան ու դերի, Հացի մշակոյթի, Հացի կրօնական ընկալման, կենցաղում նրան առընչուող առարկաների, երեւոյթների, դարձուածքների, Հաւատալիքների ներքին բոլոր կապերն ու փոխազդեցութիւնները, ուստի տարբեր աշխարհայեացքների Համադրմամբ՝ առաջարկում եմ նոր ստուգաբանութիւն, որի հիմքում այն գաղափարն է, որ հնագոյններից Հայերէն «Հաց» բառը Հաց ստեղծած ազգի ցեղանուան ճանաչելի փոխակերպումներից է, որով բաղադրուում է Հաւաքական ինքնութեան, երկրի եւ Հացի եռաչափ նոյնականացումը: Այս գաղափարի հիմնաւորման Համար անհրաժեշտ է գտնել պատմական, լեզուաբանական, մշակութաբանական, մարդաբանական, Հաւատալիքային եւ այլ բաւարար

հիմքեր: Գաղափարի ճշմարտահիմք լինելու մասին վկայում են մի շարք այլ լեզուներ՝ ցեղ-երկիր-Հաց նոյնարմատ եռանուններով, ինչպէս խրուաթերէնը՝ խրուաթ-խրուաթիա-*kruih*, անգլերէնը՝ բրիտ-Բրիտանիա-*bread*, իսթերէնը՝ Հաթ-Հաթի-*hat* (չորացած Հատիկ) կամ *haz(z)ita* (ծիսական Հաց), արեւազերէնը՝ արեւագ-Արեւագիա-*axvaza*, «Հաց»-ի՝ գոթական *hlaifs*-ից սերած սլաւոնական Համարժէքները (բուլղ. *хляб*, լեհ. *chleb*, ռուս. *хлеб*)՝ սլաւոն ժողովրդալեզուական խմբի «սլաւ» արմատի դիմաց: Մեկ այլ հետաքրքիր երեւոյթ է խափշիկ (Հաբէշ) ցեղանուան եւ արաբական *xabaz*՝ «Հաց» բառերի նմանութիւնը, որ, կարծում եմ, պատահական նմանութիւն չէ, եւ թերեւս արաբերէն անդրադարձն ու յղումն է Հացն ստեղծող ցեղի անուանը, որից որպէս նոր ու անսովոր մշակոյթ փոխառեցին արաբական անապատների անմշակելի աւազներից ելած ցեղերը: Չանդրադառնալով այլ օրինակների՝ կարծում եմ, որ Հնարաւոր է Համալրել լեզուների այս շարքը, բայց եւ այսքանն էլ բաւարար է՝ չանտեսելու Համար յիշաւի ուշագրաւ իրողութիւնը, եւ այս մօտեցումն իր հերթին կարող է խթան դառնալ լեզուաբանական, մարդաբանական, մշակութաբանական, բանագիտական, հոգեվերլուծաբանական նոր ուսումնասիրութիւնների Համար:

Summary

Studying the etymological attempts of the word *huag* "bread", you acknowledge the fact that the origin of this word is still uncertain and still unclear. And naturally besides the linguistic realities, other phenomena and their interconnections are also important here, such as a sedentary lifestyle, agriculture, food, its role on the path to civilization, bread culture, bread production, objects re-

lated to the birth of bread, phenomena, beliefs, etc. Therefore by analyzing and synthesizing the results of historical, anthropological, cultural, religious, linguistic worldviews, I propose a new etymology based on the idea that the Armenian word *huḡ* [hats] "bread", one of the oldest words in Armenian is the transformation of the Armenian self-name *huḡ* [hay] "Armenian", which also makes the name of the country Հայք "Armenia", as if forming a three-dimensional identification: who I am?, by what I live?, where I live?. We find additional foundations for this conclusion in some languages, such as the Croatian *hrvat-Hrvatska-kruh*, the English *brydon-Britania-bread*, the Hattian *hatt-Hati-hat* "dried grain" or *haz(z)ita* "liturgical bread", Abkhazian *abxaz-Abxazia-axvaza*. Probably the same relationship between the root of the Slavic-linguistic group of "slav" and the Slavic equivalents of the Gothic word "hlaifs", such as the Bulgarian "hlab", Polish "chleb", Russian "bread", etc. In my opinion, another interesting phenomenon is the similarities between the ethnos name of the Ethiopian **xabašik/abaši* and the Arabic *xabaz* "bread", and this similarity, it seems to me, is not accidental, and perhaps also a reference to the name of the tribe from which this new culture is borrowed, unusual for tribes wandering in the uncultivated sands of the Arabian deserts.

Such a perception of the word, in turn, may become the impetus for new linguistic, anthropological, cultural, psychoanalytic and other studies.

Резюме

Изучая этимологические попытки слова *huḡ* «хлеб», признаешь факт, что происхождение этого слова пока неопределено и все еще неясно. И, естественно, помимо лингвистических реалий здесь

также важны другие явления и их взаимосвязи, как оседлый образ жизни, земледелие, еда и пища, их роль на пути к цивилизации, культура хлеба, производство хлеба, связанные с рождением хлеба объекты, явления, верования и т. д. По этому анализируя и синтезируя результаты исторического, антропологического, культурологического, религиозного, лингвистического мировоззрений, я предлагаю новую этимологию, основанную на идее, что армянское слово из древнейших *huḡ* [hats] «хлеб» - на армянском языке познаваемая трансформация самоназвания армян - *huḡ* [hay] «армянин», которое также составляет название страны Հայք «Армения», как будто образуя трехмерную идентификацию: кто я, чем я жив, где я живу. Дополнительные основы для этого вывода находим в некоторых языках, как в хорватском *hrvat-Hrvatska-kruh*, в английском *brydon-Britania-bread*, в хаттском *hatt-Hati-hat* «сушеное зерно» или *haz(z)ita* «литургический хлеб», в абхазском *abxaz-Abxazia-axvaza*. Вероятно такие же отношения между корнем славяно-лингвистической группы «слав» и славянскими эквивалентами готского слова «hlaifs», такие как болгарский «хляб», польский «chleb», русский «хлеб» и т. д. По моему, другое интересное явление - сходство между названием эфиопской племени **xabašik/abaši* и арабским *xabaz* «хлеб», и это сходство, как мне кажется, не случайно, и, возможно, тоже отсылка к названию племени, у которых заимствована эта новая культура, необычная для племен, кочующих в необрабатываемых песках арабских пустынь.

Такое восприятие слова, возможно, в свою очередь, станет толчком для новых лингвистических, антропологических, культурологических, психоаналитических и других исследований.

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

Աղբալեան Ն., *Բանասերի յուշագիրը*, Բէյրութ, 1937:

Աղբալեան Ն., *Դիտողութիւններ հայոց լեզուի մասին // Հայրենիք ամսագիր*, Բոստոն, 1928, թիւ 2, 144-153:

Աճառեան Հր., *Հիսկատար քերականութիւն հայոց լեզուի*, Երեւան, 1955:

Աճառեան Հր., *Հայերէն արմատական բառարան*, Բ Ա-Դ, 1926-1931:

Աճառեան Հր. *Հայոց լեզուի պատմութիւն*, մաս Ա, 1940:

Գաբրիելեան Յ., *Հայերի եւ հայերէնի ծագման խնդիրներն ըստ լեզուաբանական եւ գենետիկական տուեալների // Բանբեր Երեւանի համալսարանի*, 2017, թիւ 1 (22):

Ենսէն Պ., *Խեթեր եւ հայեր*, Երեւան, 2012 (թարգմանութիւնը եւ առաջաբանը՝ Վ. Խաչատրեանի):

Խաչատրեան Հ., *Հացապատում*, 1984 (գրախօս՝ Վ. Ներսիսեան):

Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, Բ. Գ., ՀԽՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան 1972 (կազմող՝ Ս. Մովսիսեան (Բենսէ), նախաբանը՝ Ս. Տարոնցիի):

Հմայակեան Յ., *Խեթերէնի եւ հայերէնի առընչութիւնների հարցի շուրջ // Ջահուկեանական ընթերցումներ*, Երեւան 2017, 193-205:

Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836:

Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837:

Ջահուկեան Գ., Հայերէն ստուգաբանական բառարան, 2010:

Ջահուկեան Գ., ՀԼ Պ, Նախագրային ծամանակաշրջան, 1987:

Սուրիսեան Ա., Հայոց լեզուի դարձուածաբանական բառարան, Երեւան, 1975:

Буровский Андрей Михайлович, Нерусская Русь. Тысячелетнее Иго, Москва 2013.

Мифы народов мира, т. 1, Москва 1987.

Gluhak Alemko. The origin of the ethnonym Hrvat // Jezik: Periodical for the Culture of the Standard Croatian Language, Zagreb, 1989, Vol. 37, no. 5, 129-138.

Martirosyan Hr., Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; Nr. 8), 2010.

WADE 2015

Wade Nicholas, Date of Armenia's Birth, Given in 5th Century, Gains Credence, The New York Times, 2015.

<https://www.nytimes.com/2015/03/11/science/study-backs-5th-century-historians-date-for-founding-of-armenia.html?smid=fb-share&r=1>

Pronk-Tiethoff Saskia, The Germanic loanwords in Proto-Slavic, Amsterdam-New York 2013.

<https://www.etymonline.com/word/bread>